ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԾԻԱԾԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

1134, Արմավիրի մարզ, գյուղ Ծիածան, հեռ. 093 55-75-42 E-mail tsiatsan.armavir@mta.gov.am

№ 91
«26 » նոյեմբերի 2014թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Ղահրամանյան

ԿԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԻԱԾԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24- ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԹԻՎ 8 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ;

ԱՌԴԻՐ «10» ԹԵՐԹ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մտից թիվ 02.65/13309-14
27 11 2014թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
## Ծիածանի գյուղական համայնքի ավագանու
## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 նոյեմբերի 2014 թվական թիվ 29

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12- րդ հոդվածի հինգերորդ մասով, համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծիածանի գյուղական համայնքի 2014 թվականի նոյեմբերի 24 -ի թիվ 8 արտահերթ նիստի օրակարգը, համաձայն հավելվածի :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1. Ա. ԱԲԳԱՐՅԱՆ | ստորագրություն | ստորագրություն | ստորագրություն |
| 2. Ն. ԳԵՎՈՐԳՅԱՆ | ստորագրություն | ստորագրություն | ստորագրություն. |
| 3 . Ե. ԳԱՍՊԱՐՅԱՆ | ստորագրություն | ստորագրություն | ստորագրություն |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2014 թվականի նոյեմբերի 24
գ. Ծիածան

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԻԱԾԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ-24-
N 29 ՈՐՈՇՄԱՆ

# ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԻԱԾԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

1.ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-Ի N 8 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ
/ԶԵԿՈՒՑՈՂ ԽՍ. ԳԵՎՈՐԳՅԱՆ/

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԻԱԾԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-ի N 29- Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ԶԵԿՈՒՑՈՂ ԽՍ. ԳԵՎՈՐԳՅԱՆ/

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԻԱԾԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ԶԵԿՈՒՑՈՂ ԽՍ. ԳԵՎՈՐԳՅԱՆ/

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԻԱԾԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ԶԵԿՈՒՑՈՂ ԽՍ. ԳԵՎՈՐԳՅԱՆ/

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
## Ծիածանի գյուղական համայնքի ավագանու
## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 նոյեմբերի 2014 թվական թիվ 30-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԻԱԾԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-ի N 29-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16- րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ կետով համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծիածանի գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 24-ի « Արմավիրի մարզի Ծիածանի գյուղական համայնքի բյուջեն հաստատելու մասին» N 29-Ն որոշման մեջ հետևյալ փոփոխությունները՝ համաձայն հավելվածի :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1. Ա. ԱԲԳԱՐՅԱՆ | ստորագրություն | ստորագրություն | ստորագրություն |
| 2. Ն. ԳԵՎՈՐԳՅԱՆ | ստորագրություն | ստորագրություն | ստորագրություն. |
| 3 . Ե. ԳԱՍՊԱՐՅԱՆ | ստորագրություն | ստորագրություն | ստորագրություն |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2014 թվականի նոյեմբերի 24
գ. Ծիածան

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Ծիածանի գյուղական
համայնքի ավագանու 2014 թվականի
նոյեմբերի 24-ի N 30-Ն որոշման

# ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արմավիրի մարզի Ծիածանի գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 24-ի «Ծիածան համայնքի բյուջեն հաստատելու մասին» N 29-Ն որոշման մեջ

1. Եկամտային մասում՝

ա/ Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումներն /սուբվենցիաներ/ ավելացնել 56.4/հիսունվեց հազ.չորս հարյուր/հազ.դրամ
բ/ Տեղական վճարները պակասեցնել 500.0/ հինգ հարյուր/ հազ. դրամով
գ/ Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից, ֆոնդային բյուջե հատկացված գումարից 1000.0/ մեկ միլիոն/ դրամը տեղափոխել վարչական բյուջեի պահուստային ֆոնդ
դ/ Պահուստային ֆոնդից պակասեցնել 1000.0 /մեկ միլիոն/ դրամ

2. Ծախսային մասում՝

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| ա/ 01 բաժին | 1խումբ | 1 դասի | 4111 հոդվածին | ավելացնել | 56.4/հիսունվեցհազ չորսհարյուր |
| բ/ 01 բաժին | 1խումբ | 1դասի | 4234 հոդվածից | պակասեցնել | 12.0/տասներկու/հազ դրամ |
| գ/ 06 բաժին | 3 խումբ | 1 դասի | 4213 հոդվածից | պակասեցնել | 18.0տասնութ/ հազ,դրամ |
| դ/ 01բաժին | 1 խումբ | 1 դասի | 4214 հոդվածին | ավելացնել | 30.0/երեսուն/ հազ.դրամ |
| ե/ 08 բաժին | 2 խումբ | 3 դասի | 4241 հոդվածից | պակասեցնել | 200.0/երկու հարյուր/հազ.դրամ |
| զ/ 08 բաժին | 2 խումբ | 4 դասի | 4239 հոդվածին | ավելացնել | 200.0երկու հարյուր/ հազ.դրամ |
| է/ 01 բաժին | 1 խումբ | 1 դասի | 5121 հոդվածից | պակասեցնել | 1000.0/մեկ միլիոն/ .դրամ |
| ը/ 04 բաժին | 2 խումբ | 4 դասի | 4639 հոդվածին | ավելացնել | 500.0/հինգ հարյուր/հազ.դրամ |

24 նոյեմբերի 2014 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒ
ՎԱՐՉԱԿԱՆ Տ

Ղեկավարվ
օրենքի 16- րդ հոդվածի առ
մասին» Հայաստանի Հանրա
սանիտարական մաքրման մ
համայնքի ավագանին

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծիածանի գյուղական համայնքի վարչական տարածք
տեսակներն ու դրույքաչափերը՝

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

կողմ

1. Ա. ԱԲԳԱՐՅԱՆ -------
2. Ն. ԳԵՎՈՐԳՅԱՆ -------
3 . Ե. ԳԱՍՊԱՐՅԱՆ -------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2014 թվականի նոյեմբերի 24
գ. Ծիածան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Ծիածանի գյուղական
համայնքի ավագանու 2014 թվականի
նոյեմբերի 24 -ի թիվ 31-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԻԱԾԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

1) հիմնական օբյեկտների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ.

բ. սույն ենթակետի «ա» պարբերությունով չնախատեսված օբյեկտների համար՝

բա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տասնհինգ հազար դրամ,

բբ. 501-ից մինչև 1 000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ,

բգ. 1 001-ից մինչև 3 000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ.

բդ. 3 001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ:

2) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է երկու հազար հինգ հարյուր դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար հինգ հազար դրամ:

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար հինգ հազար դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական և հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է մեկ հարյուր հիսուն հազար դրամ:

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է երեսուն հազար դրամ.

4) հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ հինգ հազար դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում մեկ հազար:

6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար հիսուն հազար դրամ:

7. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար քսանհինգ հազար դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար հիսուն հազար դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար երկու հարյուր հազար դրամ.

4) խաղատների կազմակերպման համար հինգ հարյուր հազար դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար երկու հարյուր հազար դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար մեկ հարյուր հազար դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ յոթ հարյուր դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է մեկ հազար դրամ:

10. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծիածանի գյուղական համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է հիսուն հազար դրամ:

11. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է տաս հազար դրամ:

12. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար դրամ:

13. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար՝ տաս հազար դրամ:

14. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար դրամ:

15. Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ ըստ հասցեի բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական վճար՝ հիսուն դրամ:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
## Ծիածանի գյուղական համայնքի ավագանու
## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 նոյեմբերի 2014 թվական թիվ 32-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԻԱԾԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳ ՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16- րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծիածանի գյուղական համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացման կարգը և անհրաժեշտ ֆինանսական միջոցները՝ համաձայն հավելվածի :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1. Ա. ԱԲԳԱՐՅԱՆ | ստորագրություն | ստորագրություն | ստորագրություն |
| 2. Ն. ԳԵՎՈՐԳՅԱՆ | ստորագրություն | ստորագրություն | ստորագրություն. |
| 3 . Ե. ԳԱՍՊԱՐՅԱՆ | ստորագրություն | ստորագրություն | ստորագրություն |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2014 թվականի նոյեմբերի 24
գ. Ծիածան

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Ծիածանի գյուղական համայնքի
ավագանու 2014 թվականի նոյեմբերի 24-ի
32-Ն որոշման

# Կ Ա Ր Գ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԻԱԾԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ

### 1. Ընդհանուր դրույթներ

1.1Սույն կարգով կարգավորվում է համայնքի ղեկավարի կողմից կամավոր լիազորությունների իրականացման և դրա համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների տրամադրման հետ կապված հարաբերությունները;
1.2 Կամավոր լիազորությունները հանդիսանում է համայնքի ղեկավարի սեփական լիազորությունների բաղկացուցիչ մաս, որոնք իրականացվում են համայնքի բյուջեով նախատեսված հատկացումներին համապատասխան;

### Համայնքի ղեկավարի լիազորություններն ըստ բնագավառների

2.1 Համայնքի ղեկավարի գործունեությունը պաշտպանության կազմակերպման բնագավառում
2.1 1 աջակցում է քաղաքացիական պաշտպանության մարմինների գործունեությանը
2.1 2 աջակցում է զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման ինչպես նաև զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների
սոցիալական խնդիրների լուծմանը
2.1 3 աջակցում է բնակչության, հատկապես երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակությանը:

### 2.2 Համայնքի ղեկավարի գործունեությունը քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում

2.1 1 իրականացնում է բնակարանային և սոցիալական նշանակության այլ օբյեկտների շինարարությունը և կապիտալ վերանորոգումը
2.2 2 իրականացնում է կառուցապատման աշխատանքները
2.2 3 կազմում է ,,Քաղաքաշինության մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված / ըստ անհրաժեշտության/ մշակվող քաղաքաշինական փաստաթղթերի նախագծերը
2.2 4 կազմակերպում է հանգստի վայրերի խնամքը և պահպանությունը
2.2 5 կազմակերպում է սանիտարական մաքրման կայանքների շինարարությունը և շահագործումը
2.3 Համայնքի ղեկավարի գործունեությունը հողօգտագործման բնագավառում
2.3 1. իրականացնում է համայնքի սեփականություն համարվող հողամասերի բարելավման աշխատանքները
2.3 2. իրականացնում է ներտնտեսային հողաշինարարական աշխատանքներ

2.4 Համայնքի ղեկավարի գործունեությունը տրանսպորտի բնագավառում
2.4 1 կազմակերպում է համայնքային ենթակայության ճանապարհների, կամուրջների և ինժեներական այլ կառույցների շինարարությունը

2.5 Համայնքի ղեկավարի գործունեությունը կրթության և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում
2.5.1 աջակցում է արհեստների, ժողովրդական ստեղծագործական և գեղարվեստական ինքնագործունեության զարգացմանը
2.5.2 աջակցում է համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների պահպանությանը
2.5.3 աջակցում է երիտասարդության դերի բարձրացմանը
2.5.4 աջակցում է հանրակրթական դպրոցների գործունեությանը

2.6 Համայնքի ղեկավարի գործունեությունն առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում
2.6 1աջակցում է սանիտարական վիճակի բարելավմանը
2.6.2 աջակցում է առողջապահական մարմինների՝ սանիտարահիգենիկ, հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների իրականացմանը
2.6.3 նպաստում է համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպուտի զարգացմանը, իրականացնում է սպորտային հրապարակների և մարզական այլ կառույցների շինարարությանը, ստեղծում է հանգստի գոտիներ

2.7 Համայնքի ղեկավարի գործունեությունն աշխատանքի և սոցիալական ծառայության բնագավառում
2.7.1 նպաստում է նոր աշխատատեղերի ստեղծմանը, կազմակերպում է վճարովի հասարակական աշխատանքներ
2.7.2 միջոցներ է ձեռնարկում հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ

2.8 Համայնքի ղեկավարի գործունեությունը գյուղատնտեսության բնագավառում
2.8.1 աջակցում է գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը
2.8.2 աջակցում է տոհմային և սերմնաբուծական աշխատանքներին

Սույն կարգում թվարկված կամավոր լիազորություններն սպառիչ չեն;
Այլ օրենքներով տեղական ինքնակառավարման մարմիններն վերապահված լիազորությունները համայնքը կարող է իրականացնել միայն որպես կամավոր լիազորություններ՝ համայնքային շահերին վերաբերվող, օրենքին չհակասող ցանկացած գործունեություն;